



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

30 օգոստոսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի

Անդամակցությամբ՝ Թ. Թոխյանի

Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Վարդան Ենոքյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Վարդան Ենոքյանը (ներկայացուցիչ՝ փաստաբան Հայկազ Գալստյան) դիմել է ՀՀ սահմանադրական դատարան: ՀՀ սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումն առաքվել է փոստային եղանակով՝ 2017 թվականի օգոստոսի 8-ին: ՀՀ սահմանադրական դատարանում այն մուտքագրվել է 10.08.2017 թվականին: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վա-

րույթ ընդունելը մերժելու մասին որոշումը կայացվել է 2017 թվականի մայիսի 25-ին, հետևաբար՝ դիմողը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետում:

Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «ՀՀ Սահմանադրության 1-ին և 67-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը»:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 1-ին և 67-րդ հոդվածներով սահմանված պահանջներին, անհստակ և թերի լինելու պատճառով այն չի ապահովում օրենքին առաջադրված պահանջները, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս, որի պայմաններում իրավակիրառը հնարավորություն է ստանում խախտել մեղադրյալին Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ տրված նվազագույն իրավունքը, այն է՝ իր ընտրած պաշտպանի միջոցով մեղադրանքից պաշտպանվելու և իր դեմ վկայած անձանց նախաքննության ընթացքում հարցեր տալու իրավունքից:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի կարգավորումները նախաքննության փուլում իր դեմ վկայած անձին իր պաշտպանի միջոցով հարցման ենթարկելու իրավունքի իրացումը սահմանափակելը հանգեցրել է իր՝ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածով սահմանված իրավունքի, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքի խախտմանը:

Ըստ դիմողի՝ պաշտպանի միջոցով իր դեմ վկայած անձին հարցեր տալու հնարավորությունից զրկելը խոչընդոտում է պաշտպանի միջոցով մեղադրանքից պաշտպանվելու իրական հնարավորությանը, և այդ խախտումների վերացումն ավելի ուշ՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, հանգեցնում է մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ առկա են Վարդան Ենոքյանի դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր:

Գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները: Մասնավորապես, 2016 թվականի նոյեմբերի 11-ին մեղադրյալ Վ. Ենոքյանի պաշտպան Հ.Գալստյանի կողմից քննիչի գործողությունների դեմ բողոք է ներկայացվել ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարան (այսուհետ՝ դատարան): Դատարանի 2016 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ մեղադրյալ Վ. Ենոքյանի պաշտպան Հ.Գալստյանի վերոնշյալ բողոքը մերժվել է: Դատարանը, մեջբերելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակություն ունեցող մի շարք դիրքորոշումներ, մասնավորապես, «...մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են նախնական քննության մարմինների այն որոշումները և գործողությունները /անգործությունը/, որոնք խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահերը, ինչը, սակայն, չի նշանակում, որ քրեական դատավարության այս փուլում դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակն անսահմանափակ է: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակի հստակեցման նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սահմանել հետևյալ իրավական դիրքորոշումը. գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից զատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների բոլոր այն որոշումներն ու գործողությունները /անգործությունը/, որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման», հանգել է այն հետևությունը, որ «...վիճարկվող գործողությունը պատկանում է այն գործողությունների թվին, որոնց օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը հնարավոր է գործն ըստ էության քննության ժամանակ և դատարանում գործն ըստ էության քննելիս, չի կարող հանգեցնել անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման»: Վերոհիշյալ դատական ակտի դեմ մեղադրյալ Վ. Ենոքյանի պաշտպան Հ. Գալստյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ: ՀՀ վե-

րաքննիչ քրեական դատարանը նշված որոշմամբ արձանագրել է, որ «... տեղի չի ունեցել մեղադրյալի իրավունքների որևէ խախտում կամ սահմանափակում, քանի որ մեղադրյալը հնարավորություն ունի դատավարության հաջորդ փուլում՝ Առաջին աստիճանի դատարանում դատաքննության ժամանակ իր պաշտպանի միջոցով հարցեր ուղղելու իր դեմ վկայած անձին...»: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 25-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ մեղադրյալ Վ. Ենոքյանի պաշտպան Հ.Գալստյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Դիմողի կողմից վիճարկվող դրույթը նրա նկատմամբ կիրառվել է միջանկյալ դատական ակտերով: Ընդ որում, դիմողի կողմից վիճարկվող դրույթն իր բնույթով այնպիսին է, որ մեղադրյալը հնարավորություն ունի դրանով նախատեսված իրավունքն իրացնել նաև գործի ըստ էության քննության ժամանակ, հանգամանք, որը մատնանշել է նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը:

Անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջներից է նաև դատական պաշտպանության միջոցների սպառումը: Այս պահանջն ինքնանպատակ չէ և միտված է նրան, որ անձն իր ենթադրյալ խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման համար սպառի օրենսդրությամբ նախատեսված բոլոր հնարավորությունները, որից հետո միայն իրավունք ստանա դիմելու Սահմանադրական դատարան: Դատական կազմը գտնում է, որ խնդրո առարկա գործի շրջանակներում անձը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Համաձայն 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել՝ «...յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»: ՀՀ Սահմանադրությունն իր 101-րդ հոդվածին է վերապահել Սահմանադրական դատարանի դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց

դիմումների ընդունելիության պայմանները: Ըստ այդ պայմանների՝ դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,
- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է որևէ օրենքի դրույթ,
- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ելնելով վերոնշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Վարդան Ենոքյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

30 օգոստոսի 2017 թվականի

ՄԴԴԿՈ/2-20